ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 17 » հունվարի 2020 թվականի N: 19-Ա ք.Գյումրի

ԱՐԱՔՍՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ՄԱՐՄԱՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշման հավելվածի 71-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N 23-Ն որոշման հավելվածի 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության «Մարմաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 16-ի թիվ 3 որոշումը, եզրակացությունը և Արաքսյա Գրիգորյանի 2020 թվականի հունվարի 16-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2020 թվականի հունվարի 20-ից դադարեցնել Արաքսյա Գրիգորյանի՝ «Մարմաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի լիազորությունները:
2. Արաքսյա Գրիգորյանին 2020 թվականի հունվարի 20-ից նշանակել «Մարմաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի

պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է